



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 12 >> Չրապետ 2019թ.

N ՎԳ/133-2019

ք. Արմավիր

ԽԱԶԻԿ ԻՆՋՅԱՆԻՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N2 հավելվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի հուլիսի 18-ի N 01/11/04909-2019 գրությունը, «Իմ քայլը հանուն Կոտայքի մարզի» համաժողովին մասնակցելու նպատակով.

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Խաչիկ Ինջանին 2019 թվականի օգոստոսի 17-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաք՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի ճանապարհային փոխադրումն ապահովելու նպատակով:
2. Գործուղումն իրականացնել TOYOTA LC 150 մակնիշի 055 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենայով:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետի պաշտոնակատար՝ Ա. Վասիլյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարությանը (պետ՝ Դ. Դավթյան)՝ ապահովել համապատասխան վառելանյութի տրամադրումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

VERIFIED OCSP 8/12/2019 17:26:30 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230